

2009թ. կոռուպցիայի հետազոտություն Հայաստանի տնային տնտեսություններում և ձեռնարկություններում

Հետազոտության համառոտ նկարագրությունը և նպատակը

Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոններ (ՀՌԿԿ)-Հայաստանը ԱՄՆ ՄՋԳ Հակակոռուպցիոն գործողության մոբիլիզացիոն ծրագրի (ՀԳՄԾ) շրջանակներում, Հայաստանում անցկացրել է կոռուպցիայի վերաբերյալ երեք հետազոտություն, որոնց նպատակը կոռուպցիայի հանրային ընկալման չափումն ու հակակոռուպցիոն ջանքերի գնահատումն է: Տնային տնտեսություններում առաջին հետազոտությունն իրականացվել է 2008թ. հոկտեմբերին Հայաստանի բոլոր մարզերում 1549 պատահականորեն ընտրված չափահասների (18 տարեկան և ավելի) շրջանում: 2009թ. հոկտեմբերին անցկացված համանման երկրորդ հետազոտությամբ հարցվել է 1515 չափահաս: Ձեռնարկությունների հետազոտությամբ, որն անցկացվել է 2009թ. դեկտեմբերին և 2010թ. հունվարին, ընդգրկվել է Հայաստանի բոլոր մարզերում գործող 400 մասնավոր ձեռնարկություն:

Հետազոտության գործիքները և մեթոդաբանությունը

Հարցաթերթերը. տնային տնտեսությունների հետազոտության հիմնական գործիքը՝ հարցաթերթը, պարունակում է կոռուպցիայի ընդհանուր ընկալմանը, դրա դրսևորման ձևերին ու տարբեր ոլորտներում տարածվածությանը, կոռուպցիոն անհատական վարքագծին, կառավարության հակակոռուպցիոն գործողությունների մասին տեղեկացվածությանը և այլնի վերաբերող ավելի քան 80 հարց: Ձեռնարկությունների հետազոտության համար ՀԳՄԾ-ի առաջարկած նախնական հարցաթերթը զգալիորեն փոփոխվել է՝ հարմարեցվելով հայաստանյան իրողություններին, ինչպես նաև համանման հետազոտությունների միջազգային պրակտիկային՝ հնարավոր դարձնելով թե՛ միջերկրային համեմատությունները, թե՛ համեմատությունը տնային տնտեսությունների հետազոտության հետ: Կոռուպցիայի ընդհանուր ընկալմանը վերաբերող հարցերից բացի հարցաթերթը պարունակում է հատուկ հարցեր բիզնեսի միջավայրի, բյուրոկրատիայի լրացուցիչ գործառնական ծախսերի, պետական գնումների մրցույթների, դատական համակարգի և այլնի վերաբերյալ:

Ընտրանքը. տնային տնտեսությունների հետազոտությունն իրականացվել է բազմաստիճան քլաստերային ընտրանքի մեթոդով՝ քաղաքային, գյուղական վայրերի և մարզերի նախնական ստրատիֆիկացմամբ: Տնային տնտեսությունների ընտրանքի շրջանակ է ծառայել Հայաստանում էլեկտրացանցերի բոլոր բաժանորդների ցանկը: Ընտրված տնային տնտեսություններում հարցվողի պատահական ընտրությունն իրականացվել է չափահաս անդամներից՝ առաջիկա ծննդյան օրվա մեթոդով: Ձեռնարկությունների հետազոտության ընտրանքի համար կիրառվել են Հայաստանի հարկատուների և «Սփյուռ» գործարար տեղեկատվության բազաները: 400 մասնավոր ձեռնարկություն ընտրելու համար կիրառվել է պարզ պատահական ընտրանքի մեթոդը:

Տվյալների հավաքագրման մեթոդը. հարցաթերթերը լրացվել են դեմ առ դեմ հարցազրույցների միջոցով՝ տնային տնտեսությունների կացարաններում և ձեռնարկությունների տարածքներում:

Հետազոտության որոշ արդյունքներ

Տնային տնտեսություններում 2009թ. հարցվածների ճնշող մեծամասնությունը (84 տոկոսը) գտնում է, որ կոռուպցիան լուրջ խնդիր է Հայաստանի համար: Ձեռնարկությունների հետազոտությամբ հարցվածներն ավելի են մտահոգված կոռուպցիայով, քան ընդհանուր բնակչությունը. գործարարների 90 տոկոսը կոռուպցիան համարում է բավականին կամ շատ լուրջ խնդիր: Ավելին, կոռուպցիան Հայաստանում «սովորական երևույթ» է համարում 2009թ. տնային տնտեսություններում հարցվածների մոտ 60 տոկոսը, իսկ ձեռնարկություններում՝ հարցվածների 73 տոկոսը:

Հարցվածների մեծամասնությունը կարծում է, որ Հայաստանում կոռուպցիան կարող է կրճատվել միայն որոշ չափով կամ ընդհանրապես չի կարող կրճատվել: Նրանք իրենց չեն համարում կոռուպցիայի դեմ պայքարի ներուժ կրողներ. տնային տնտեսություններում և ձեռնարկություններում հարցվածների 60 և 49 տոկոսը, համապատասխանաբար, նշել է, որ Հայաստանում կոռուպցիայի մակարդակը նվազեցնելու համար ոչինչ չի կարող անել:

Երկու հետազոտությամբ էլ հարցվածների մեծամասնությունն ասել է, որ կաշառքի պահանջի դեպքում պատրաստակամ է վճարել, քանի որ անհրաժեշտ ծառայությունն ստանալու կամ խնդիրը լուծելու այլ տարբերակ չի տեսնում:

Այդուհանդերձ, հարցվածների ճնշող մեծամասնությունը (72 տոկոսը՝ թե՛ տնային տնտեսությունների, և թե՛ ձեռնարկությունների հարցման դեպքում) կմերժեր կաշառք վերցնելու առաջարկը՝ անընդհատ դա «անընդունելի»: Այս համոզմանը հույս է ներշնչում, որ հակակոռուպցիոն ներուժն Հայաստանում բավականին բարձր է, և այն պատշաճորեն գործադրելու դեպքում կարելի կլինի էականորեն կրճատել կոռուպցիան:

Հետազոտության արդյունքների հասանելիությունը

Հետազոտության գործիքներն ու արդյունքները (հարցաթերթը, ցուցադրաքարտերը, հավաքագրված տվյալների բազաները SPSS ֆորմատով, հիմնական արդյունքների վերաբերյալ զեկույցը, ներկայացումների փաթեթը, ինչպես նաև 2008թ. հետազոտության վրա հիմնված վերլուծական հոդվածները) ազատորեն հասանելի են www.crcc.am վեբկայքում: Այլ փաթեթը կարելի է ստանալ նաև լազերային սկավառակով:

ՀՌԿԿ

ՀՌԿԿ-ն Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի մայրաքաղաքներում հիմնված և Հարավային Կովկասում հասարակագիտական հետազոտություններն ու պետական քաղաքականության վերլուծությունը խթանելու նպատակ հետապնդող հետազոտական ռեսուրսների և ուսումնական կենտրոնների ցանց է: Նյու Յորքի Կարնեգի կորպորացիայի, Եվրասիա համագործակցություն հիմնադրամի և Երևանի պետական համալսարանի գործակցությամբ գործող ՀՌԿԿ-Հայաստանը տեղացի գիտնականներին և պետական գործիչներին առաջարկում է հետազոտությունների, դասընթացների և համագործակցության բազմաթիվ հնարավորություններ:

CRRC-Armenia: Արևմտյան 52, սենյակ 305, 307, 309 312
Հայաստան, Երևան 0025,
Հեռ.: 58-13-30
Ֆաքս: 58-14-50
Էլ. փոստ: crcc@crcc.am
URL: www.crcc.am

ՀԳՄԾ

Մեկնարկելով 2007թ. հուլիսին որպես համապարփակ հակակոռուպցիոն նախաձեռնություն, որի նպատակը կոռուպցիայի նվազեցումն է թե՛ տեղական, թե՛ համակարգային մակարդակներում՝ ԱՄՆ ՄՋԳ ՀԳՄԾ-ն օժանդակում է Հայաստանի Հանրապետության պետական մարմիններին և հասարակական կազմակերպություններին՝ 1)ստեղծելով բողոքների արձագանքման մեխանիզմներ և իրականացնելով համակարգային ու ընթացակարգային բարեփոխումներ, 2)մշակելով և իրականացնելով հակակոռուպցիոն նախաձեռնություններ ընտրված պետական մարմինների հետ, 3)օժանդակելով քաղաքացիական հասարակության կազմակերպություններին հակակոռուպցիոն գործողության համալսմանն ուղղված նորարար մոտեցումներ մշակելիս, ինչպես նաև 4)բարձրացնելով հակակոռուպցիոն իրազեկության մակարդակը երիտասարդների և մեծահասակների շարքերում: ՀԳՄԾ-ն իրականացնում է Կասալս ընդ Ատոչիեյս ընկերությունը:

ՀԳՄԾ: Տեղյան 105/1, սենյակ 804
Հայաստան, Երևան 0009
Հեռ.: +374 10 514 834
Ֆաքս: +374 10 514 836
Էլ. Փոստ: maac@casals.com
URL: www.maac.am

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմեք ՀՌԿԿ-Հայաստան, Եվգենյա Պատուրյանին, crcc@crcc.am և jenny.paturyan@crcccenter.org հասցեով: